

—)(—

Պոլսի օստիկանութեան նախարարին հրամանով: Պուլկար կառավարութիւնը ձեռքարկելից զայն եւ հարցաքննութեան ենթարկելից: Կը հաստատուի թէ իր թուղթերուն մէջ գտնուեցաւ նամակ մը զոր իր բարեկամներէն մէկը կը գրէր հրաւիրելով որ անմիջապէս մեկնի Պուլկարիստէն, վասն զի ճանչցուած է եւ պիտի ստափուի: Մինչեւ հոս ամէն ինչ լաւ կերթար: Բայց յետոյ երեւան եկաւ ուրիշ աղտոտ հայերու պաշտպանութիւնը: Ուրախուի է որ Ֆրիլիպէի թաղական խորհուրդը եւ կղերք մերժեցին պաշտպանել զայն: Բայց ի Սօֆիա Զ. անուն անհատ մը որ տակաւին քիչ ժամանակ առաջ 200 ֆրանք ստացած է թուրք քովմէրէն իրր ողորմութիւն, հոգով մարմինով կաշխատի ազատել զայն: Կը գրէ Սօֆիայի քահանային եւ թաղական խորհուրդին որուն քարտուղարութեան պաշտօնը կը վարէր զԺբարտարար եւ կը թուի թէ կը յաջողի բարի վարքի պաշտօնական վկայագիր մը ձեռք բերել: Պուլկար կառավարութիւնը արտաքսեց Լեւոն Մէսթիանը Պուլկարիստէն, որ հիմա կը գտնուի Կ. Պոլսի բաղամթիւ անմեղ հայերու արեւը ծծելու համար:

Ազգային դպրոցներու քննութիւնները սկսան եւ կը վերջանան մէկ քանի օրէն: Անշուշտ ոչ քննիչ կայ ոչ ալ քննութիւն կոչուելու արժանի գործ մը: Նոյն կատակը գութիւնը զոր խաղացած են աստուծոս երկար տարիներ մեր դաստիարակները, կրկնուեցաւ այս անգամ ալ: Թէ ի՞նչ խղճալի վիճակ կը ցուցնեն աշակերտները եւ ինչ գարտազի մեթոտներ կը գործադրուին աշակերտներուն վիճակը լաւագոյն ցուցնելու համար, ամէն կրթուած անհատ գիտէ հոս: Ընդհանուր համարով մը կայ թէ անհրաժեշտ է հիմնական փոփոխութիւն մը: Ման-

կավարժական արդի մեթոտներու վրայ հիմնուելու է վարժարանը: Արդէն անցեալ տարի զգացուած էր այս պէտքը եւ պաշտօնական անձեր խտուամտանուած թէ էր նոր պատաներ պիտի բերուին: Սակայն յետոյ մեծ ցուցով տեսնուեցաւ որ հակառակ պաշտօնական խտուամտաներու այս պատաները կը մնային իրենց գրուած ստանդարտներէն: Բայց պատճառով պատանեցան ցուցիլ զէպքեր, որոց կրկնուեցին կը վախճանք թէ ազատուած չենք եթէ նորէն պաշտօնական խտուամտաներ չը գործադրուին: Ուրախութեամբ կը յայտարարեմ թէ շնորհիւ մէկ քանի ազգայնիկ եւ բանդէա անձնաւորութեանց, Հոգարարձութիւնը որչա՞մ է հրաժարեցնել յոյն գաւառուները, ալ իր հրաժարականը եւ թողուլ որ նոր բարեփոխութիւնը մտցուին գոյրցի մէջ նոր եւ կարող Հոգարարձութեան մը միջոցով:

Այս որոշում մեծ արտօնութիւն կազդէ քաղաքիս զարգացած շրջանակին: Տեղացի տարրին մէջ կը գտնուին մէկ քանի խոհուն անձեր որք կը տեսնեն թէ իրենց շահը եւ քաղքին հանգստութիւնը կը պահանջեն հիմնական թալ են որոշումներ դպրոցին մէջ: Գաւառուներուն պաշտպաններն ալ միշտ խտուամտանաւ են թէ դպրոցներուն վիճակը երբեք գոհացուցիչ եղած չէ: Անձնական կիրք եւ տոկոս թիւն գոհացնելու միջոց բրած էին դպրոցները: Խոհուն գաւառիկները պէտք է գիտնայ թէ իր տալէւ շատ ծանր եւ կարեւոր խնդիր մը կայ գոտարարութիւններով լեցուն: Անշուշտ այս գաւառուները պիտի չի կրնան մնալ. բայց անոնց սեղ նորիս պէտք է ընտրել որք արժանի ըլլան իրենց կարեւոր գործին: Իմ գաղափարով հոս է գփաւորութիւնը: Ամենին առաջ պէտք է ընտրել համարաչիս եւ զարգացած տարրերէ Հոգարարձութիւն մը: Սա պէտք

է ընտրէ Տնօրէն մը որ մանկավարժութեան հասկնայ եւ կարող ըլլայ նոյն սկզբունքներու վրայ հիմնուած գաղափարով Տնօրէնին թողելու է ստորակարգ պաշտօնականներ ընտրելու հոգը, որպէս զի դպրոցական պաշտօնութիւնը կազմուի համարաչիս եւ համարժեք տարրերէ: Բոլոր այս գաւառուները օտար քաղաքներէ պէտք է ընտրել որպէս զի կիրք եւ ատելութիւն չը կրնան մտնել խնդրին մէջ: Այս միջոցներով կրնանք ունենալ ապագային մէկ քանի տարրիներէ հետք մեր երազած դպրոցը: Սպասենք եւ յոսանք:

Անթիլիանքու խումբը կը շարունակէ իր աշատակաւթիւնները «Միութեանական» անունին տակ: Կը լսենք թէ խումբին պետք, Ա. Շ. հրաժարեցուցուած է իր գաւառու պաշտօնէն եւ պիտի մեկնի քաղաքէս գործիլ ըլլալու համար «Միութեանականներուն»: Բարի վայելու՛մ: Այսպէս, փոքրցային թերթը կը կորսնցունէ իր փոքրցային թղթակիրը: Ինչ մեծ դժբախտութիւն: Բայց կը հաւատան թէ Պուլկար «Միութեանականներուն» պետք, Գ. Գ. որ վաւանայի եւ Սօֆիայի մէջ բաւական կողոպուտներ բրած է, հոս պիտի գայ Ա. Շ. ի սեղը լեցնելու համար: Սակայն ինչ ալ ըլլան իր բարեմասնութիւններ, անկարող պիտի ըլլայ հաւասարել Ա. Շ. ի որ անմասն վարպետ մըն է խաչագողութեան ալ հետին մէջ:

Ն.Ս.Մ.Ս.Կ.Ս.Ս.Ո.Ի.Փ

Անվճար կամ անբաւական կերպով վճարուած նամակները բացարձակ կը մերժուին: Թուամանիակն Եկած քարթ բոստանները 10 սանթիմնոց ըլլալու են: —)(—

Դ.Ս.Ա.Ս.Ս.Ս.Ո.Ի.Ի.Ե. Պ. Ս.Ա.Պ.Ա.Ղ.Չ.Գ.Ի.Կ.Ե.Ս.Ն.Ի

Երկրորդ դպրոցն է պատմական դպրոցը, որ բոլորովին դէմ է յետ-փոփոխ սկզբունքին: Այս դպրոցը կը կարծէ որ մարդս տնտեսական հաստատութիւնները պիտի փոխէ այն ուղղութեամբ ինչ որ պատմութիւնը իրենց ցոյց տուած է, նաեւ կընդունի որ ներկայ ընկերական կազմակերպութեան մէջ անարդարութիւնն անելի շատ է, հետեւեալը հարստութեանց բաշխումը բոլորովին անհաստատ: Իսկ արդարութիւնը գործադրելու եւ հարստութեանց հաւասար բաշխում յառաջացնելու համար պէտք է որ պետութիւնը իր ձեռքն առնէ այդ գործը: Աղտաական դըպրոցի այն խօսքին թէ մարդը կենդանի մըն է որ ամէն ջանք կը թափէ միմիայն իր գոյութիւնը պահպանելու, միմիայն իր պիտոյքները լրացնելու, պատմական դպրոցը կը պատասխանէ որ անհատը նոյնքան եւ գուցէ աւելի միտում ունի զոհուելու յանուն գաղափարի, յանուն ազատութեան եւ նոյն իսկ յանուն մարդկութեան: Եթէ ըլլալիք

բոլոր բարենորոգումները պետութիւնը պիտի ներմուծէ, ուրեմն խնդիր է թէ ի՞նչ է պետութիւնը: Պ. դասախօսը, բացատրելով պետութեան նշանակութիւնը, երկար փատտելով ցոյց տուաւ որ ներկայ պետութիւնը չի կրնար արմատական բարենորոգումներ ներմուծել, վասն զի ատոնք դէմ պիտի ըլլային այն դասակարգի գոյութեան շարունակը ներկայացնէ:

Ճշմարտարեւոյթութիւններ մուծել եւ ընկերային անհաստատութիւնը վերցնել կարող է միայն ընկերավարականութիւնը: Բաւական չէ միայն քաղաքական միահեծանութիւն ունենալ, այլ եւ հարկաւոր է ունենալ տնտեսական միահեծանութիւն, որպէս զի համայնքի անդամները մէկը միմիայն միջոց չըլլային: Ընկերավարական դպրոցի մասին խօսելով, Պ. դասախօսը յարեց, որ այդ դպրոցը այնքան հին է որքան եւ ազատական դպրոցը, կարելի է ըսել աւելի հին, ուրովհետեւ ընկերավարական սկզբունքները կը գտնուին Պլատոն յոյն փիլիսոփայի գրուածքներու մէջ: Բոլոր ընկերավարական դըպրոցները կընդունին որ ներկայ

ընկերական կազմակերպութիւնը անբուժելի արարքներ ունի, ուստի պէտք է այդ ընկերութիւնը բոլորովին նոր հիմունքներու վրայ դնել ի՞նչ օրէնքագրական ճանապարհով եւ կամ յեղափոխութեամբ: Անտանձ ըլլալու եւ պատմական անարդարութիւնը են պատճառ ներկայ բոլոր թերութեանց, վասն զի այժմեան տնտեսական եւ քաղաքական գրութիւնն, ընդհանուրին շահը մասնաւորին զոհած է եւ ընկերութեան անդամները իրարու դէմ զինած:

Վերջապէս կանգ առնելով հայկական շարժմանց վրայ, Պ. դասախօսը քանիցս կրկնեց, որ հայերս պիտի կորուզանք մեր յանկացածը ձեռք բերել միմիայն «Չեղափոխութեամբ», ուստի յորդորեց, ոչ թէ արդէլք հանդիսանալ յեղափոխական գործունէութեանց, այլ ընդհակառակը, ամենայնիւ օգնել եւ քաջալերել լինանք:

Իսկ մինչեւ ցարդ եղած յեղափոխական շարժումներու արդիւնքը եթէ մենք անմիջապէս չտեսանք, սակայն այդ շարժումները մեծամեծ օգուտներ ունեցան հայկական կեանքի մէջ եւ միեւ

Պ. Արշակ Զօպանեան կը պատասխանէ մեզ «Իրաւունքի վերջին թիւին մէջ: Մենք կը հաւատանք թէ մեր «յափուտանքներուն» ատանկ ցափուտանքներով պատասխանելու համար մէկգի դրած է այն գրիչն ու մեղանը ուրոնցմով կը վերլուծէ Նարեկացիներ: Անոնց սուրբ յիշատակը պղծած պիտի ըլլար, ատանկ անպատկառ նախադիւնքներու գործիք դարձնելով նոյն գրիչն ու մեղանը:

Իր համբաւատու քարդը մեղ ուղղած տեսն, անոր յետին ծայր նախատակած իմաստէն սակարակացուցիչը որ երիտասարդ դրագէտը իր ամէնէն կուսակցամուրական զգայմանը մէջ կըծուած ու խեղկորոյս, վայրկեանական բորբոքման մը ազդեցութեան տակ երկնած ու մեղ յղած էր զայն, բայց յետոյ ստորջացած:

Այս մտածմամբ խնայեցիւնք իր գրական համբաւին որ այդ քարդով «վերջնականապէս կազարտուէր, կանուանարկուէր», ու անոր էն բանաւոր մասն արտատուելով պատասխանեցիւնք: Վաւրընդի եթէ այդ քարդ ամբողջութեամբ հրատարակուէր — ինչպէս հեղինակը կը պահանջէր — հարկ կըլլար իբրեւ պատասխան մէկ բառ մը միայն նետել անոր հեղինակին երեսին. — լի՛րք:

Անբացատրելի ցառով կը տեսնենք որ Պ. Զօպանեան ոչ միայն

նոյն ժամանակ ցոյց տուին թէ հայը Արեւելեան խնդրի մէջ դեր եւ շահ ունեցող ազգերէն մին է եւ կարող է մեծ պետութեանց դիւանագլխութեան վրայ ազդել. ուստի որպէս զի բաւարար լուծում մը ստանայ հայկական դատը, պէտք է որ մենք, հայերս, շարունակենք վառ պահել Արեւելեան խնդիրը եւ թոյլ չտանք որ դոցուի:

Պ. դասախօսը այնուհետեւ հերքեց այն տղայական կարծիքը զոր քանի մը միամիտներ սկսած են տարածել թէ հայերս չկարողացանք ձեռք բերել Եւրոպական պետութեանց համակրութիւնը, որովհետեւ մեր յեղափոխականները ընկերավարական սկզբունքներ կը տարածէին: Այդ մը շարժականութեան մէջ դնելու համար հարկաւոր է տալ անոր խիստ զօրուոր մղիչ գաղափարներ. եւ ալ ի՞նչ վեհագոյն գաղափար կրնայ ըլլալ, քան ընկերավարականութիւնը որ 19րդ դարու մարդկային ընկերական կեանքի Աւետարանը կը կազմէ:

—)(—

ՀԱՅԵՒՆԻ ՅԷՄԱՍԱԿՆԵՐ

—)(—

Երբ աղօթարանը իր մթնշաղ ճառագայթները Ազգայնական Ս. Խաչի բարձր կաթողիկէի գմբէթին դարեւրերէ ի վեր յազմապահած խաչին վրայ կը սփռուի ու Արտոս եւ իր յարակից կանանչաւաւ լեռանց անոնք զբարձր կապուտակ ծովին վրայէն հեզիկ սահելով մաղուելով բոլորովին անխտան ու անխորհուրդ կենդանութեան ընդ կը բերէր, այդ ապաստան կղզիին մէջ հնչող զանգակի զանկ, զանկէն կարթնանք, անմիջապէս պատահանին անջուր կը վազենք, ուրկէ արդէն կազդուրիչ օղբ հնար կը խուժէ: Առաւօտեան այդ հոգիները ու լուրջ ժամուն՝ հողեկան քաղցր ապաւորութեան մը սակ անկուշտ կը զխամ ծովը որ իր վէտ վէտ ալիքներով ու զփութի նազիկ շրջաններով լեզու ունենալ ու հոյրին իր անցեալ փառքը նկարագրել կը թուի: Կը զխամ Ռշառնեաց զաշան ու արգաւանդ հողերի վրայ հաստատուած զիւզերը: Կը սենեմ հանդիպակաց Մանածիբի բերդին բակերները՝ սրուն ձերքեւ ծովը իր գալարուն երբ ունի, ու երբ կը մտածեմ որ այս ամենը իրենց անմտացութեամբ մեր ազգային հին յիշատակներու եւ փառքի վկաները են, կը սարսփմ ու սոսկ մը իրականութեան մոռցած, վերացած հողիով զէպի Արծրունիք, զէպի ազատ Հայրենիք կը խոյանայ միտքս: Արծրունեաց թագաւորները, Ռշառնի ներքիններն ու Ռաւանայ սասանիկները իրենց փառքով կը կարծեմ անտեսել: Թո՛ւքքն ու թո՛ւքքն այլուս անցող ճիւղերն են: Հայաստանը, իր վաւարականամբ, ազատ ու ինքնիշխան տէր է իր ունեցածին, ու մաքր այս անուշ երազներու յափշտակութեան մէջ որքան պատահեց թուեցաւ ինձի կեանքը՝ երբ Ս. Խաչի զանգակը իր զանկ, զանկով մթնօրեաց միտքս, որ վայրկի մը անցող երջանկութեան թեւերով անկայման մէջ էր: Հիշու՛ իրականում թեան զանգ արտակներով նորէն սկսաւ շարժուիլ ինչ:

Կը փութանք եկեղեցի երթալ, որ արդէն ժամերգութիւն սկսած է: Խաչատուր կաթողիկոս իր սիրական աթոռին վրայ ինքնագործ բազմած քթին տակէն կը հետեւի սրուն աւարտողութեան, սարգմտին ու շարականին:

Գաղիկ Արծրունին, ինչպէս կը գրէ Թովմայ Արծրունի պատմիչը՝ իր փառասենյ ըզձանաց համաձայն ուզած է կարելի եղածին չափ լաւ ու փառասեր կանգնել այս սոճարը, որպէս զի Արարատեան ընդհանրական կաթողիկոսութեան մրցակից կարենայ ըլլալ: Ս. Խաչ Մայր եկեղեցիի ու կաթողիկէի ամբողջ քարերը սրբաւառ ու կրփածոյ են: Թովմայ Արծրունի պատմիչին նայելով, Ազձնեաց բերանէն, Ազնուածուրոյ արեւելահայտիս թուի զեղին գեղէն ոչ նուազ հոռոճ սահմաններէն այդ քարերը հոն փոխադրուած են: Նախանձոտ արքայի անդիմադրելի կամքին համաձայն՝ զեղակիտ ու հիւնալի ձարտարապետութեամբ շինուած է: Կրօնական զանազան պատկերներ ու նկարներ տաճարին քարերուն վրայ փորագրուած են նուրբ ու զեղեցիկ արուեստով: Եկեղեցիին ներսի կողմը, աշակերտեան պատին վերեւ՝ վերնաշարի բարձրութեամբ պատին մէջէն, պատշգամբի ձեւով առանձին սեղ մը շինուած է Արծրունի

նի թագաւորներուն համար, ուր հանդիսաւոր օրերուն կուզային աղօթելու: Խաչածեւ կաթողիկէի մը նշանով, Ս. Խաչ անունը տրուած է այդ Մայր տաճարին:

Լուռ ու անխօս, Ս. Խաչի այդ վեհապանձ կամարին տակ, աւագ խորանի դիմաց կանգնած՝ մեր ազգային կեանքի անցեալի ու ներկայի միջեւ զգոնային ուրուականի պէս ցցուող իրականութիւնը յոգեարու անսահման ուղիներու մը մէջ կը խորատուէ միտքս: Հայրենիքի յիշատակներու այդ թանկագին պատկերները՝ իրենց սրբութեամբ ու մեծութեամբ իրենց կարօտի արցունքներ կը խլեն...:

Մինչեւ վերջին «օրհնակը եղեւրուք»-ին կը համբերէ կաթողիկոսը, միշտ իր գահին վրայ ամուր մը սեղմուած: Վերջին աղօթքը արարքերէն էր ետք զուրս կեղծ տաճարէն, անձամբ կատաղնորդէ իս մէկ քանի նշանաւոր տեղերը, ու իր ինքնագով խօսքերով կը նկարագրէ իր զանազան օգտակար ձեռնարկութեանց՝ աղբիւր կողմէն յուսացած մեծ օգնութիւնը չը գանկուեն համար ապարդիւն մնալը՝ հակառակ իր բարի կամեցողութեան: մէկ խօսքով ինչպէս իր կողմէ կը ներկայացնէ մեծ ու օգտակար գահակալ մը, ու իր այդ բոլոր ըսածներուն ու նկարագրած մտացածին մեծագործութեան իրր առհասարակաց՝ ցոյց կուտայ ինքն իրեն յատուկ առանձին հպարտութեամբ մը այն հաստ տուճարը, որուն մէջ արձանագրուած կայ հազարաւոր մարդոց ձեռագրերով, իր կողմէ հոս հոն գրուած ամէն մեծ ու փոքր նամակներու, տոմարակներու, հարսնիքի հրամանագրերու եւ այլն գրութեանց պատճեններ: «Այս տուճարը պատմութեան մեծ լոյս մըն է» կը լսէր, սրով հետեւ օր մը հայ ազգը ասով պիտի համոզուի որ Խաչատուր կաթողիկոս Խաչատուրի այսինչ զեղի քահանայէն պսակի հրամանագրամբ ուղերւ համար՝ գրած տոմարակն օրինակը ընդօրինակել տալով, օգտակար գործ մը կատարած եղեր է: Խաչ մարդ, Աւետարանի բաժնին պէս «զուրս կը խաչուի եւ զմիտքս քամէր»: Վանքապատեան առատ եկամուտին ու կաթողիկոսական ընդարձակ թեմերու հասարակութեան անարակ ու հաշիւ չէր գործածեր ու անհամ ու տնլի գրութիւններու ընդօրինակութեան տուճարը կը խնամէր:

ՊԵՏ

[Շարունակելի]

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՂՔԱՍԱԿՆԵՐ ԸՆԿ. ՏՕՊՐԻՉԻ

1897 Դեկտ. 5—31 Մարտ 1898	
ՄՈՒՏՔ	Ֆր.ԱՄ.
598 բաժնիներէ գոյացած	59.80
Նուէրներէ	66.40
Գուճար	126.20
ԵՒՔ	
Ազգասիրներու բաշխուած հայ եւն.	94.15
Ազգասիրներու, անցորդներու կողմ նպաստ	18.85
Կնիքի եւ սեւարակներու ծախսուած	13.20
Գուճար	126.20
Ի դիմաց Գործ. Ժողովոյ	
Վ. Ասենապարի	Ատենապետ
Պ. Շորոյեան	Ա. Մազնսան

—)(—

չէ զգալու, այլ ե կը շարունակէ անխորհուրդ հայհոյանքի այդ գրուի գործոցը թերթէ թերթ պատգուենի նախ վար զարնելու համար «արժում»ի հրանք: Արփիարի ինչորին մէջ բռնած բոլորովին ուղիւ, բանաւոր ու արգարացի ընթացքը, և յետոյ, ու ամենէն աւելի, պաշտպանելու համար իր գրական մենտորը, Պ. Արփիարը, որուն աչքը մանելու գերմարդկային ճիգեր կը թափէ՝ ամէն ողջմտութիւն մտնալու աստիճան:

Մինչեւ ան վայրկեանը որ Պ. Արփիարին անունը աննպաստ կերպով չէր արտասանուած «ճարժում»ի մէջ, Պ. Չօպանեան համակող կը մնայ անոր. բայց այդ «նո իրական» անունը հրատարակուելուն պէս՝ «Ճարժում» «նախանօրէն կը պղծէ այն արժանիքը զոր Պ. Չօպանեան հաճած էր տեսնել...»: Ով որ կրնայ թող ծիծաղը զսպէ ամենէն անհեթեթ ու ամենէն անտրամաբանական այս զաղափարին վրայ: Պ. Չօպանեան իր խրատ տիրոջն զօրանակ զուրս ելլել ջանալու, երթալով անոր մէջ կը միտքի կոյր թարթափութեամբով:

«Ճարժում» «անձնական կիրքերու գործիք կը դառնայ» երբ Հրանդի պատասխանը կը հրատարակէ. բայց ինչ ըսել Պ. Արփիարի ըրածին որ նախապաճալի կուսակցութեան մը օտկանը իր անձնական կիրքերուն գործիք կը դարձունէ:

Աս տրամաբանութեամբ, «Իրաւունք» գործիքը դարձած կըլու «Ճարժում»ի դէմ Պ. Չօպանեանի յօդուածն հրատարակելով: Միեւնոյն տրամաբանութեամբ, «Իրաւունք» «անկողմնակալ ուղղութիւն» ունենալէ պիտի գաղբի՞ երբ Հրանդէն պատասխան մը հրատարակէ իր է. երուն մէջ:

Մենք Պ. Արփիարի դէմ մտնաւոր հակառակութիւն չունինք. եթէ աս անունը ազարտելու առիթներ փնտռենք, շատ կան. գեւ անցած օր «Իրաւունք» «Միութիւն»էն կարտասուէր զարձուրելի ամբաստանութիւն մը (հեղինակութեան մը՝ «Թափառելի» կողմէ գրուած) ոչ ա՛նք անուանէ, բայց ինչորին առարկան պայծառապէս դուրս կը ցայտէրատով Պ. Արփիար կամբաստանութիւն իբրեւ սկզբնադատուած 200,000 հայերուն փճացմանը:

Եւ մեր «Պառակալիչ օգի» մակդիրը արդարացիելու համար բազմութիւն ապացոյցներու մէջ բաւական էր միայն յիշել «Միութիւն»ի մէջ Պ. Ճանկիւլեանի ըսածը. Պ. Արփիար յայտարարել է որ «Իր գրիչովը վեց ամիսէն պիտի կործանէ Գաշնակցութիւնը»...: Ա՛լ չենք գիտեր թէ աստիճանի գիտաւորութեամբ ճամբայ ելլող մէկը ինչպէս հայ-

րենասէր և ոչ—պառակալիչ կըլլայ:

Մենք Պ. Արփիարի անցեալ կեանքով չենք զբաղիր. ինք իր կուսակցութեան հետ մշակուող նորութիւն մը ըլլալով, իր ներկայ վիճակին պարագաներուն համեմատ միայն կը քննադատենք զինքը. իր անցեալովը ան առեւն պիտի զբաղինք երբ «խորհրդաւոր տողումնաները» վերջնապէս լոյս աշխարհք գան, ու ամէն բան պարզուի:

Իսկ այս տեսակ ինչորներու մէջ ձեր ձայնը ու նեղիճուկ արամբանութեան եղանակը ա՛լ մեղի համար զաղանիք մը չըլլալով, կը հրաւիրենք ձեզ զբաղել լոկ բանասիրական աշատութիւն ներսով, որոնց մէջ միայն պիտի կրնաք ձեր համբաւն ու արժանիքը անաղարտ պահել:

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՎԱՆՔԸ

—)(—

Կիւրոսէ «Մշակի» գրուած թղթակցութիւն մը շատ տխուր զոյններով կը նկարագրէ Երուսաղէմի վանքը և զայն կը ներկայացնէ իրբւ ապականութիւններով լեցուած մթնշաղ մը:

Աքտրուած հոգեւորականներէն զատ, միւս միտքաններուն մէջ ամենախոյտառակ անձնաւորութիւններ կարելի է տեսնել, որոյ մէջ ձեւքով ցիւխի մէջ ընկղզմամբ: Այս սեւ հոգի վանականները բաւ չանկելով որ ժողովուրդին վրայ հեծած անպէտ մակարոյձներ են, նաեւ մատնութիւններ ընելու չեն քաշուիր. այնպէս որ խցիկներուն մէջ տեղի ունեցած ամէնէն հասարակ խօսակցութեան խօյ մըն օրը քաջաբին տալիս նութիւնը տեղեակ կըլլայ:

Եւ յետոյ ամէն հայ հիմակ աւղատ չէ սխտապնացութիւն ընելու. և այս կաշկանդուճք միայն ստորկանութեան կողմէ չէ որ տեղի կուենայ, այլ նոյն լոկ Երուսաղէմի Գողտոյ պատրիարքներուն թեւազրութեան վրայ:

Այսպէս տարիւկէս առաջ երկուստարդ մը ետ դարձուցուեր է Եաֆաէ՛ Պալոյ Պատրիարքարանին հրահանգով: Նոյնպէս ընդհանուր ներուճի ժամանակ Տրիպոլի աքտրուած հայ քաղաքական յանցաւորները աղատելէ ետքը Պէրսի զացեր են անկէջ Երուսաղէմ երթալու համար, ինչպէս ուխտած են եղեր բանալին մէջ: Բայց ստո՛ք ալ մերժուեր են Եաֆաէն, որովհետեւ Յարութիւն Պատրիարքը պատուիրած էր որ կասկածելի և տղքատ հայերուն թոյլ շարուի երուսաղէմ երթալ: Վահագիւէ մը սակից աւելին չապաստելի:

—)(—

